

Չկապակցված կողմերում ոչ ընթացիկ ներդրումների հաշվառումը

Չկապակցված կողմերում ոչ ընթացիկ (երկարաժամկետ) ներդրումների ճանաչման, չափման, գնահատման մոտեցումները նկարագրված են ՀՀՀՀՍ 25 «Ներդրումների հաշվառում» ստանդարտում:

Ներդրումն ակտիվ է, որը կազմակերպությունը պահում է բաշխման միջոցով ունեցվածքը (հարստությունը) ավելացնելու (ինչպես՝ տոկոսների, ռոյալթիների, շահաբաժինների և ռենտաների տեսքով), ներդրող կազմակերպության կապիտալի աճի կամ այլ օգուտների ստացման նպատակով:

Ներդրումները դասակարգվում են ընթացիկի (ներդրում, որն իր բնույթով արագ իրացվելի է և նախատեսված է պահել ոչ ավելի, քան մեկ տարի) և երկարաժամկետի (ընթացիկ ներդրում չհանդիսացող ներդրում է):

Չկապակցված կողմերում երկարաժամկետ ներդրումների հաշվառումը վարվում է 142 «Այլ ոչ ընթացիկ ներդրումներ» առաջին կարգի հաշվի 1421 «Ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կողմերի կանոնադրական կապիտալում» և 1422 «Ոչ ընթացիկ ներդրումներ չկապակցված կողմերի պարտքային արժեթղթերում» երկրորդ կարգի հաշիվներով:

Որպես երկարաժամկետ ակտիվներ դասակարգված ներդրումները հաշվապահական հաշվեկշռում պետք է ներառվեն.

ա) ինքնարժեքով,

բ) վերագնահատված արժեքով, կամ

գ) շուկայական (հեշտ իրացվելի) բաժնեմասնակցության արժեթղթերի դեպքում՝ պորտֆելի հիմունքով որոշված ինքնարժեքից և շուկայական արժեքից նվազագույնով:

Չկապակցված կողմերում ոչ ընթացիկ ներդրումների ձեռք բերման դեպքում տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները՝

ԴԲ 142 «Այլ ոչ ընթացիկ ներդրումներ»

ԿԲ 251 «Դրամարկղ»

252 «Հաշվարկային հաշիվ»

253 «Արտարժույթային հաշիվ» և այլն

Երբ կիրառվում է վերագնահատված արժեքը, պետք է սահմանվի վերագնահատման պարբերականության քաղաքականություն և երկարաժամկետ ներդրումների ամբողջ կատեգորիան պետք է վերագնահատվի միաժամանակ:

Երբ վերագնահատումից ներդրման արժեքն աճում է՝ տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները՝

ԴԲ 142 «Այլ ոչ ընթացիկ ներդրումներ»

ԿՐ 321 «Ակտիվների վերագնահատումից արժեքի աճ»

կամ ԿՐ 614 «Գործառնական այլ եկամուտներ» (այն չափով, որքանով վերականգնում է նախորդ վերագնահատումներից նախապես ծախս ճանաչված նվազումը):

Երբ վերագնահատումից ներդրման արժեքը նվազում է, ապա տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները՝

ԴԲ 321 «Ակտիվների վերագնահատումից արժեքի աճ»

կամ ԴԲ 717 «Գործառնական այլ ծախսեր» (այն չափով, որքանով վերականգնում է նախորդ վերագնահատումներից նախապես եկամուտ ճանաչված աճը):

ԿՐ 142 «Այլ ոչ ընթացիկ ներդրումներ»

Շուկայական (հեշտ իրացվելի) բաժնեմասնակցության արժեթղթերի դեպքում՝ պորտֆելի հիմունքով որոշված ինքնարժեքից և շուկայական արժեքից նվազագույնով հաշվառելու դեպքում ներդրումների ժամանակավոր իջեցումները և դրանց վերականգնումը (հաշվառվում է 144 «Ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազում» առաջին կարգի հաշվով) վերագրվում են սեփական կապիտալին (հաշիվ 322 «Չիրացված վնասներ ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազումից») և այդպիսի իջեցումը որոշվում է յուրաքանչյուր ներդրման համար առանձին:

Տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

-շուկայական արժեքի ժամանակավոր նվազման դեպքում՝

ԴԲ 322 «Չիրացված վնասներ ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազումից»

ԿՐ 144 «Ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազում»

-շուկայական արժեքի ժամանակավոր նվազման վերականգնման դեպքում՝

ԴԲ 322 «Չիրացված վնասներ ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազումից»

ԿՐ 144 «Ոչ ընթացիկ ներդրումների արժեքի նվազում»

Պարտքային արժեթղթերի ձեռք բերման արժեքի և անվանական (մարման) արժեքի տարբերությունը հաշվառվում է 143 «Ոչ ընթացիկ պարտքային արժեթղթերի

ձեռք բերման արժեքի և անվանական (մարման) արժեքի տարբերություն» առաջին կարգի հաշվով:

Վերոնշյալի հաշվապահական ձևակերպումների ավելի պատկերավոր ներկայացնելու համար բերենք թվային օրինակ.

Օրինակ. կազմակերպությունը 8000 դրամով ձեռք է բերում 10000 դրամ անվանական արժեք ունեցող մուրհակ՝ երկու տարվա մարման ժամկետով:

ԴԲ	142 «Այլ ոչ ընթացիկ ներդրումներ»	10000 դրամ
ԿՐ	143 «Ոչ ընթացիկ պարտքային արժեթղթերի ձեռք բերման արժեքի և անվանական (մարման) արժեքի տարբերություն»	2000 դրամ
ԿՐ	251 «Դրամարկղ»	8000 դրամ

Մուրհակի ձեռք բերման արժեքի (8000 դրամ) և անվանական (մարման) արժեքի (10000 դրամ) միջև բացասական տարբերությունը (զեղչը)՝ 2000 դրամ երկու տարվա ընթացքում հավասարաչափ ամորտիզացվում է և ճանաչվում եկամուտ: Յուրաքանչյուր դեպքում տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը՝

ԴԲ 143 «Ոչ ընթացիկ պարտքային արժեթղթերի ձեռք բերման արժեքի և անվանական (մարման) արժեքի տարբերություն»

ԿՐ 627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտ»

Երբ ներդրման ձեռք բերման արժեքն փոքր է անվանական (մարման) արժեքից, ապա տարբերություն, որն իրենից ներկայացնում է որպես հավելավճար և դեբետագրվելու է 143 «Ոչ ընթացիկ պարտքային արժեթղթերի ձեռք բերման արժեքի և անվանական (մարման) արժեքի տարբերություն» հաշվին՝ մարման ժամկետի ընթացքում հավասարաչափ ամորտիզացվում է՝ դեբետագրվելով 627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտ» հաշվին (նվազեցնելով եկամուտը):

Թաթուլ Մովսիսյան
«Էկոնոմիկա և իրավունք» 4.2000